ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<20>> դեկտեմբերի 2016 թվականի N 107 ք.Գյումրի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, 1.16-րդ կետի <<ա>> ենթակետի դրույթներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գեղանիստի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության բնականոն գործունեությունն ապահովելու, կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության պահանջները պատշաճ կերպով իրականացնելուն աջակցելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝ ապահովել անհրաժեշտ միջոցառումների իրականացումը՝ դպրոցի տնօրենի պաշտոնակատարի կողմից օրենսդրությամբ սահմանված պարտականությունները ստանձնելու եւ դպրոցի բնականոն գործունեությունը կազմակերպելու հարցում առկա խնդիրները կարգավորելու ուղղությամբ:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի դեկտեմբերի <<20>>-ի
N107 կարգադրության

ԿԱԶՄ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Վաչագան Վարդանյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ, խմբի ղեկավար.

Արմեն Ստամբոլցյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ,

Նելլի Փահլևանյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ,

Վարդան Սահակյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,

Ռիտա Նարոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ,

Մանվել Ղազարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գեղանիստի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի նախագահ /համաձայնությամբ/:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Խ.ՊՈՂՈՍՅԱՆ

Իսկականի հետ միշտ է